

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
 ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**







ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն


ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
 Հաշվետվություն թիվ 139, 20.12.2016թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,760,731 հատ,	40,000 հատ	280.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սրույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝ Կարեն Հակոբյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		20.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ		20.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների ղեկավարամետի պետ		20.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		20.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմայան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		20.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		20.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		20.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)



20 դեկտեմբերի 2016թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց Բաժնետիրական Ընկերության և «Զարգացման Հայկական Բանկ» Բաց Բաժնետիրական Ընկերության միացման պայմանագիրը հաստատելու և գրանցելու մասին Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի Խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 229 Ա որոշում (ՀՀ ԿԲ Խորհրդի որոշումը կցվում է):


ԿՈՂ
050.0229 Ա. 15.12.16

15 դեկտեմբերի 2016 թվականի թիվ 229 Ա

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի «իթ» կետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի միացման կարգի» 7-րդ կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի պահանջը՝ բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի՝ 2017 թ. հունվարի մեկից 30 մլրդ ՀՀ դրամ սահմանումը և այն հանգամանքը, որ բանկերի միացումները, այդ թվում՝ վերոհիշյալ որոշմամբ նկարագրված միացումը ուղղված է այդ պահանջի կատարմանը և դրա



անհապաղ կատարումը կենսական նշանակություն ունի ՀՀ ֆինանսական համակարգի համար,

ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 60 արձանագրություն)՝ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի միջնորդագիրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Հաստատել և գրանցել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (Պահպանվող Բանկ) և «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (Միացող Բանկ) միացման պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

2016 թ. դեկտեմբերի 20
Երևան

